



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3  
Էլ. փոստ /E-mail/ эл.почта: e.pirumyan@mnp.am  
Web page: www.mnp.am  
☎ (374 10) 58 54 19  
☎ (374 10) 54 08 57

№ 5/12.1/52503

<23> 08 2014թ.

Ապարանի <<Օրհուս>> կենտրոնի  
համակարգող տիկին Ն. Մանուկյանին

Հարգելի տիկին Մանուկյան

Ի պատասխան Ձեր 2014թ. հուլիսի 25-ի գրության, հայտնում եմ, որ <<Մեզո Գոլդ>> ՍՊԸ կողմից փորձաքննության ներկայացված Թուխմանուկի երրորդ պոչամբարի նախագծին 26.04.2013թ. տրվել է ԲՓ-36 բացասական եզրակացություն՝ հետևյալ փորձաքննական հիմնավորումներով.

- Նախագծային փաստաթղթերում բացակայում էին <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> << օրենքի /այսուհետ՝ օրենք/ 6-րդ հոդվածով սահմանված ազդակիր համայնքի՝ որոշումը տվյալ վարչատարածքային միավորի զարգացման պլանին նախատեսվող գործունեության համապատասխանության մասին, ինչպես նաև ազդակիր համայնքի որոշումը հողհատկացման մասին,

-փոխկապակցվածությամբ պայմանավորված՝ նոր պոչամբարի հետ անհրաժեշտ էր փորձաքննության ներկայացնել նաև ոսկու բաց հանքի շահագործման, ինչպես նաև հարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցման նախագծերը:

-բացակայում էին << կառավարության 11.11.1998թ <<<< արդյունաբերական օբյեկտի կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 702 որոշմամբ նախատեսված գործող պոչամբարների անվտանգության վկայագրերը,

-ճապոնական միջազգային գործակալության կատարած ուսումնասիրությունների տվյալներով պոչամբարի տարածքում առկա են սողանքներ,

-նախագծում բացակայում էին Օրենքի 5-րդ հոդվածով պահանջվող այլընտրանքային լուծումները՝ այդ թվում պոչամբարի պատնեշի և հատակի կավային շերտը պոլիէթիլենային թաղանթով փոխարինումը:

Փորձաքննական հիմնավորումների կատարման շրջանակներում ձեռնարկողը ներկայացրել է ազդակիր համայնքի որոշումը հողհատկացման մասին, գործող պոչամբարների անվտանգության վկայագրերը,



սողանքների վերաբերյալ պարզաբանումները և Թուխմանուկի բաց հանքի նախագծային փաստաթղթերը: Վերջինիս առնչությամբ, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 11.09.2013թ. N5/33/52663 գրությամբ ձեռնարկողին, առաջարկվել է առաջնորդվել «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 49,51 և 57-րդ հոդվածներով: Նշված գրությանը ձեռնարկողն առայսօր չի պատասխանել:

«Մեզո Գոլդ» ՍՊ ընկերությունը 13.12.2013թ. Թուխմանուկի նոր պոչամբարի լրամշակված բնապահպանական մասը Օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով կրկին ներկայացրել է փորձաքննության: Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են 09.01.2014թ.:

Մելիքյուղ համայնքի ղեկավարը Թուխմանուկի նոր պոչամբարի լրամշակված նախագծի մասին ծանուցվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի 16.01.2014թ. N5/33/50097 գրությամբ, ինչին առայսօր պատասխան չի տրվել: Օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, սահմանված ժամկետում լիազորված մարմին կարծիք չներկայացնելու դեպքում այն համարվում է դրական:

Նկատի ունենալով կատարված ոչ էական նախագծային փոփոխությունները՝ նախագիծը կրկին կարծիքի չի ներկայացվել ՀՀ առողջապահության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություններին:

2014թ. փետրվարի 10-ին և 12-ին Երևան քաղաքում տեղի են ունեցել նախագծային փաստաթղթերի և դրանց վերաբերյալ լիազորված անձի մասնագիտական եզրակացության հասարակական լուսմներ, որոնց մասին հայտարարությունները հրապարակվել են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և տեղադրվել ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում:

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն 28.03.2014թ. Մելիքյուղ համայնքում տեղի են ունեցել մասնագիտական եզրակացությունների նոր հասարակական լուսմներ, որոնց մասին ծանուցվել են բոլոր շահագրգիռ կողմերը, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետը: 2014թ. ապրիլի 16-ին «Մեզո Գոլդ» ՍՊ ընկերությունը դիմել էր փորձաքննական եզրակացության տրամադրումը հետաձգելու խնդրանքով, ինչը բավարարվել էր:

Արդյունքում, անցնելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերը, Թուխմանուկի նոր պոչամբարի կառուցման վերաբերյալ 30.06.14թ տրվել է ԲՓ-41 դրական փորձաքննական եզրակացություն:

Թուխմանուկի նոր պոչամբարի նախագծին առնչվող բոլոր փաստաթղթերին կարող եք ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ում /ք. Երևան Կոմիտաս 29, հեռ. 22-02-18/:

Հարգանքով



Է. Փիրույան

Ա. Վարդանյան  
523835